ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ

05 ապրիլ 2024թ.

«ԿԱՈՒՊԵՐՖՈՒԴ» ՍՊԸ տնօրեն Աղասի Դանիելյանին
Էլ.փոստ: cowperfood@yandex.com
Հասցե՝ ք.Երևան,Խուդյակով 175/1
ՀՎՀՀ 01059264

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Հարգելի մասնակից

Ծաղկաձոր համայնքի **«Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի** կողմից 22.11.2023թ. հայտարարված « **ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-24/1**» ծածկագրով ընթացակարգի **3,10,15,16,17,20,23,29,34 և 46** չափաբաժինների արդյունքում Ծաղկաձոր համայնքի **«Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ**-ի (այսուհետ՝ Գնորդ) և **«ԿԱՈՒՊԵՐՖՈՒԴ» ՍՊԸ**-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 21 դեկտեմբեր 2023թ. կնքվել է թիվ «**ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-24/1-3**» ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետը և Պայմանագրի 8.3 կետը՝ մեր կողմից իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել է, որ **«ԿԱՈՒՊԵՐՖՈՒԴ» ՍՊ ընկերությունը (*ՀՎՀՀ 01059264*) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Մասնակցի իրական շահառու հանդիսացող անձը, հանդիսանում է մի շարք ընկերությունների իրական շահառու, որոնք ներառված են գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 121-րդ կետի պահանջների՝ «Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:»:**

Միաժամանակ հայտնում եմ, որ Վաճառողը 3-րդ չափաբաժնի մասով մատակարարման ենթակա տավարի փափուկ միսը մատակարարել է պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին անհամապատասխան, մեր կողմից այն չի ընդունվել և հետ է վերադարձվել:Մասնակցին բազմիցս զգուշացվել է մատակարարել տեխնիկական բնութագրին

համապատասխանող ապրանք,սակայն շարունակվել է մատակարարել անորակ միս: Մեր կողմից վերոգրյալի մասով կազմվել է համապատասխան արձանագրություն:

Պայմանագրի 2.1.7 և 2.1.7.1 կետերի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի՝

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որ չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

Քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները և իրավական կարգավորումները, Գնորդը թիվ «**ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-24/1-3**» ծածկագրով պայմանագրի **3,10,15,16,17,20,23,29,34 և 46** չափաբաժինները համարում է միակողմանի մասնակի լուծված՝ 1274180 /մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունչորս հազար մեկ հարյուր ութսուն/ ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ Կառավարության 2017թ. մայիս ի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, համաձայն որի՝ «պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին.»:

Պատվիրատուն գնման ընթացակարգը միակողմանի մասնակի լուծելու մասին որոշում կներկայացնի Լիազոր մարմին՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջները:

ՏՆՕՐԵՆ **ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ**